ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 847-Ա/2 «02» հուլիսի 2020թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հունվարի 29-ի N 59-Ա/2 հրամանով հաստատված Եվրոպական հետազոտական տարածքում Հայաստանի Հանրապետության հետազոտությունների և մշակումների բնագավառի ինտեգրման ճանապարհային քարտեզի 8-րդ կետի 4)-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2020թ. հուլիսի 2-ի
N 847-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարում է Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է համացանցային առցանց (on-line) ռեժիմով (գրանցվելով https://grants.scs.am/ հասցեում)՝ մինչ **2020 թվականի օգոստոսի 7-ը ներառյալ (հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին)**:

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում (http://scs.am/):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնում՝ աշխատանքային օրերին, ժամը 14:00 - 17:00, հեռ.՝ 21-01-40 (118):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2020 թ. հուլիսի 2-ի
N 847-Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված գիտական թեմաների (այսուհետ՝ Թեմա) հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության մրցույթն (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) 2020 թվականի հուլիսի 2-ի N 847-Ա/2 հրամանի:

1.2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներով և մասնագիտություններով (Հավելված N 2.1) գիտական հետազոտությունների իրականացման համար 36 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի 4-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի (այսուհետ՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված Թեմաներին:

1.3. Հայտը չի քննարկվում, եթե՝

- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ այլ թեմայի/ծրագրի հետ,
- նախագծի հեղինակի կողմից նախկինում իրականացված թեմայի վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների:

- Խմբի ղեկավարի կողմից ներկայացվել է Բիալի ցանկերում (Beall's list,https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն:

1.4. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև Հաշվետվություն ներկայացնելու դեպքում Խմբի ղեկավարը պետք է առաջնորդվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

1.5. Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին.

- *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ _____ ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

- *Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА в рамках научного проекта № _____.*

- *The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project № _____.*

1.6. Թեմայի իրականացման ընթացքում, յուրաքանչյուր 12 ամիսը լրանալուց հետո Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (տարեկան) Հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

1.7. Թեմայի ավարտից հետո Կոմիտե է ներկայացվում ամփոփիչ Հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Հաշվետվությունն ընդունելու մասին:

1.8. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Թեմայի անոտացիան և Հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Խմբին ներկայացվող պահանջները

2.1. Խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ կամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ, ինչպես նաև Թեմայի կատարման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) թեմաների/ծրագրերի ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների), եթե

այդ թեմաները (նախագծերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված Թեմաների ֆինանսավորման սկիզբը:

2.3. Խմբի ղեկավար կարող են լինել 1966 թվականի հունվարի 1-ից հետո ծնված կանայք, ովքեր ունեն գիտական աստիճան և 2020 թվականի փետրվարի 1-ից մինչև Մրցույթին դիմելու օրը գիտական կազմակերպությունում կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ Կազմակերպություն) չեն զբաղեցնում ղեկավար պաշտոն (լաբորատորիայի (բաժնի) կամ ամբիոնի վարիչ և այլ ավելի բարձր պաշտոններ):

2.4. Խմբի ղեկավարը, վերջին 5 տարիների ընթացքում, պետք է ունենա՝

- առնվազն մեկ գիտական հոդված՝ ազդեցության գործակից (այսուհետ՝ ԱԳ) ունեցող (ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների) ամսագրերում,

- կամ երկու գիտական հրապարակում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)», (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրապարակված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)») ընդգրկված ամսագրերում,

- կամ մեկ՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալ ունեցող մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ հրատարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում:

2.5. Խմբում պետք է ընդգրկված լինի մինչև 35 տարեկան առնվազն մեկ կին կատարող, ում 35 տարին չի լրանում մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը: Երեխա(ներ) ունենալու պարագայում մինչև 35 տարեկանի տարիքային շեմը ենթակա է վերանայման՝ յուրաքանչյուր երեխայի համար ավելացնելով լրացուցիչ 1 տարի:

2.6. Խումբը պետք է ունենա գիտական խորհրդատու (այսուհետ՝ Խորհրդատու)՝ ով ունի գիտական աստիճան և զբաղվում է գիտահետազոտական գործունեությամբ տվյալ մասնագիտությունով օտարերկրյա գիտական կազմակերպությունում:

2.7. Խորհրդատուի Հիրշի ինդեքսը (h-index) պետք է լինի առնվազն 10՝ ըստ «Scopus» (https://www.scopus.com/freelookup/form/author.uri) գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների:

2.8. Խորհրդատուն իր պաշտոնական էլեկտրոնային հասցեից **մինչև 2020 թվականի օգոստոսի 7-ը ներառյալ** պետք է grants@scs.am էլ. հասցեին ուղարկի իր CV-ին (Curriculum

Vitae), ինչպես նաև հաստատող գրություն (confirmation letter)՝ նշելով, որ ծանոթ է Թեմայի բովանդակությանը և համաձայն է հանդես գալ որպես Թեմայի Խորհրդատու և Թեմայի իրականացման ընթացքում կընդունի Թեմայի անդամներին՝ Թեմային առնչվող միջոցառումներ իրականացնելու նպատակով (գիտափորձեր, քննարկումներ, սեմինարներ և այլն):

2.9. Թեմայի իրականացման ժամանակահատվածում (36-ամսվա հաշվարկով) առնվազն 15 օր Խորհրդատուն պետք է գտնվի Հայաստանի Հանրապետությունում, իսկ Խմբի անդամները հանրագումարում առնվազն 15 օր պետք է գտնվեն Խորհրդատուի գիտական կազմակերպությունում:

2.10. Խմբի անդամները և Խորհրդատուն չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

2.11. Խմբի կատարողները պետք է հանդիսանան առնվազն մագիստրատուրայի ուսանողներ:

2.12. Խմբի անունից կարող է հանդես գալ միայն Խմբի ղեկավարը:

3. Ակնկալվող արդյունքները

3.1. Թեմայի ավարտից հետո Խմբի անդամները (ներառյալ ղեկավարը) տվյալ ծրագրի շրջանակներում պետք է ունենան առնվազն երկու գիտական հոդված «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում ամսագրերի դասակարգման առաջին կամ երկրորդ (Q1, Q2 quartile) քառորդում (այսուհետ՝ Ք1 կամ Ք2) ընդգրկված ամսագրերում (https://www.scimagojr.com/journalrank.php): «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառի մասնագիտությունների համար՝ առնվազն երկու գիտական հրապարակում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Arts&Humanities Citation Index (AHCI)», «Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրապարակված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)») ընդգրկված պարբերականներում կամ մեկ՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալ ունեցող մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ հրատարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում:

3.2. 3.1 կետում նշված պայմանի չկատարելը/կատարելը կազդի հետագայում Կոմիտեի հայտարարած մրցութային ծրագրերին Խմբի անդամների կողմից ներկայացված գիտական

թեմայի փորձագիտական գնահատականի վրա՝ դրանից հանելով/գումարելով տվյալ մրցույթի առավելագույն գնահատականի 5 տոկոսի չափով միավոր Խմբի ղեկավարի ընդգրկված լինելու դեպքում և 1 տոկոսի չափով միավոր՝ Խմբի կատարողներից յուրաքանչյուրի դեպքում: Հանրագումարում կհանվի/կգումարվի տվյալ մրցույթի առավելագույն գնահատականի ոչ ավել քան 5 տոկոսի չափով միավոր: Հետագա մրցութային ծրագրերին Խմբի անդամների կողմից ներկայացված գիտական թեմայի փորձագիտական գնահատականի նվազեցումը կչեղարկվի Թեմայի ավարտից հետո 3.1 կետի պայմանը բավարարելուն պես:

3.3. Թեմայի իրականացման ժամանակահատվածում Խմբի անդամները պետք է ապահովեն Թեմայի և/կամ ոլորտի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և տարածում (հարցազրույցներ, գիտահանրամատչելի ամսագրերում հրապարակումներ, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի են առնվելու Խորհրդի կողմից ամփոփիչ Հաշվետվությունը գնահատելիս:

4. Հայտերի լրացման և ներկայացման կարգը

4.1. Հայտը (Հավելված N 2.3) լրացնում և ներկայացնում է Խմբի ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով (grants.scs.am)՝ **մինչև 2020 թվականի օգոստոսի 7-ը ներառյալ** (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

4.2. Կոմիտե ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- Խմբի ղեկավարի դիմումը (Հավելված N 2.2),
- Համակարգում (grants.scs.am) ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը, ֆինանսական նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ),
- մինչև 35 տարեկան կատարողի անձնագրի պատճենը, ինչպես նաև մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի պատճենը, ասպիրանտ կամ մագիստրանտ հանդիսանալու դեպքում՝ տեղեկանք, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին, իսկ մինչև 35 տարեկանի տարիքային շեմի վերանայման նպատակով յուրաքանչյուր երեխայի ծննդյան վկայականի պատճենը:
- Խորհրդատուի CV-ն և համաձայնության գրությունը:

4.3. Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ մինչև 2020 թվականի **օգոստոսի 14-ը ներառյալ**:

4.4. Թեմայի ֆինանսավորման առավելագույն չափը (12 ամսվա համար),

- 5 անձից բաղկացած Խմբերի համար նախատեսել 12,000 հազար ՀՀ դրամ,
- 4 անձից բաղկացած Խմբերի համար նախատեսել 9,800 հազար ՀՀ դրամ:

4.5. Խմբի անդամների աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել մինչև 150,0 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: Աշխատանքի վարձատրության գումարը վերոնշյալ չափից պակաս նախատեսելու դեպքում տարբերությունը կարող է օգտագործվել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

4.6. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման կամ ծառայությունների ծախսեր: 150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող գնի սարքավորումների, նյութերի կամ ծառայությունների անհրաժեշտությունը պետք է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

4.7. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել Թեմայի ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով միջազգային գիտաժողովներին մասնակցության համար, ինչպես նաև Խորհրդատուի և Խմբի անդամների փոխադարձ այցելությունների գործուղման ծախսերը հոգալու համար: Գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերն անհրաժեշտ է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

4.8. Գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի, բայց ոչ ավել՝ քան ամսական 1 500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12-ամսվա ընթացքում):

4.9. Վերադիր ծախսերը (36 ամսվա համար) չպետք է գերազանցեն 600,0 հազար ՀՀ դրամը:

5. Հայտերի գիտական փորձաքննությունը

5.1. Մրցույթի պայմաններին բավարարող Հայտերը տրամադրվում են Խորհրդին՝ գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

5.2. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են Թեմայի արդի վիճակը, նորույթը, իրականացման նախադրյալները, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, համագործակցության նպատակահարմարությունը, գիտական

արդյունքների տնօրինումը և տարածումը, գիտության տվյալ մասնագիտության առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

5.3. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում երկու փորձագետների կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է Կոմիտեի կողմից մշակված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը (Հավելված N 2.4):

5.4. Գիտական փորձաքննության գնահատման թերթիկի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով, առավելագույնը **5** միավոր՝ **0,5** միավորի ճշտությամբ:

5.5. Գիտական փորձաքննության ժամանակ փորձագետի առավելագույն գնահատականը **50** միավոր է:

5.6. Խորհրդի կողմից գնահատվում են Նախահաշվի հիմնավորվածությունը, միջազգային համագործակցության աստիճանը, ազդեցությունը ոլորտի զարգացման վրա, Խմբի ղեկավարի, կատարողների և Խորհրդատուի մասնագիտական համապատասխանությունը Թեմային և որակավորումը՝ ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի որոշման մեթոդաբանության (Հավելված N 2.5):

5.7. Խորհրդի առավելագույն գնահատականը **30** միավոր է:

5.8. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է:

5.9. Երկու փորձագետների գնահատականները **20** և ավելի միավորներով տարբերվելու դեպքում Հայտը տրվում է երրորդ փորձագետին՝ գիտական փորձաքննության: Այդ դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների՝ երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Առաջին երկու փորձագետների գնահատականների և երրորդ փորձագետի գնահատականի հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

5.10. Կոմիտեի և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

5.11. Գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում Խորհրդին՝ քննարկման:

5.12. Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

5.13. Կոմիտեն, ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշմամբ հաստատված «Պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների նոր գիտական թեմաների, այդ թվում՝ թիրախային (նպատակային) գիտական թեմաների ֆինանսավորում» ծախսային ուղղությամբ նախատեսված ծավալներից, որոշում է շեմային գնահատականը, որից բարձր կամ դրան հավասար գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Նախարարը հաստատում է Թեմաների ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսավորման չափը:

5.14. Կոմիտեն Համակարգի (grants.scs.am) միջոցով Խմբերի ղեկավարներին տրամադրում է գիտական փորձաքննության արդյունքները, որոնք ներառում են փորձագետների եզրակացությունները (ապահովելով փորձագետի անանունությունը), Խորհրդի գնահատականը, շեմային գնահատականը, Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը:

5.15. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է տվյալ Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսված ֆինանսավորման չափը:

6. Այլ դրույթներ

6.1. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Խմբի ղեկավարի միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր:

6.2. Ֆինանսավորման երաշխավորված Խմբի ղեկավարի և կատարողների միջև, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով, կնքվում են պայմանագրեր, որոնց պատճենները ներկայացվում են Կոմիտե:

6.3. Ֆինանսավորման երաշխավորված Խմբի և Կազմակերպության ղեկավարների միջև կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր («Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսված գումարի չափով), որի պատճենը ներկայացվում է Կոմիտե:

6.4. Խմբի ղեկավարի երկու ամիս Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում Թեմայի ֆինանսավորումը դադարեցվում է:

6.5. Խմբի ղեկավարը կարող է դիմել Կոմիտե՝ համարժեք փոփոխություն կատարելու՝ ըստ տարիքային խմբի և գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի, կամ Խմբի կատարողների թիվը մեկով կրճատելու (եթե մինչև 35 տարեկան կատարողը չէ) միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում(ներ)ը: Խմբի կատարողի թվի կրճատման դեպքում Խմբի ղեկավարի և Կոմիտեի միջև կնքվում է պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

Հավելված N 2.1
Գիտական և գիտատեխնիկական գործունեության
պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված
գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Մաթեմատիկա
1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ
1.3. Ֆիզիկա և աստղագիտություն
1.4. Քիմիա
1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ
1.6. Կենսաբանական գիտություններ
1.7. Այլ բնական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն
2.2. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ
2.3. Մեխանիկա
2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն
2.5. Քիմիական տեխնոլոգիաներ
2.6. Նյութագիտություն
2.7. Բժշկական սարքաշինություն
2.8. Էկոլոգիա
2.9. Կենսատեխնոլոգիա
2.10. Նանոտեխնոլոգիա
2.11. Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր բժշկություն
3.2. Կլինիկական բժշկություն
3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա
3.4. Այլ բժշկական գիտություններ

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն
4.2. Բուսաբուծություն
4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա
4.5. Այլ գյուղատնտեսական գիտություններ

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հոգեբանություն
5.2. Տնտեսագիտություն և գործարարություն
5.3. Մանկավարժական գիտություններ
5.4. Սոցիոլոգիա
5.5. Իրավունք
5.6. Քաղաքական գիտություններ
5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն
5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն
5.9. Այլ հասարակական գիտություններ

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Պատմություն, հնագիտություն
6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն
6.3. Փիլիսոփայություն, էթիկա
6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն
6.5. Արվեստագիտություն
6.6. Այլ հումանիտար գիտություններ

Հավելված N 2.2

Գիտական և գիտատեխնիկական գործունեության
պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված
գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ_____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացնում եմ «_____ » վերնագրով հայտը:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«____» _____ 2020թ.

Հավելված N 2.3
Գիտական և գիտատեխնիկական գործունեության
պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված
գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավերի

<u>Ուշադրություն:</u> Ստորև բերվող բոլոր ձևերը նպատակ ունեն ծանոթացնելու առցանց լրացվող ձևերի հետ և դյուրացնելու առցանց լրացնելու գործընթացը:

ՀԱՅՏ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Հայտը հանձնված է «_____» _____ 2020 թ. Ծածկագիր՝ _____
(Ձևավորվում է Համակարգի կողմից)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի վերնագիրը և մասնագիտական դասիչ(ներ)ը
2. Հուշող (բանալի) բառեր
3. Խմբի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան թիվը, գիտական աստիճանը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն
4. Խորհրդատուի ազգանունը, անունը, հայրանունը, գիտական աստիճանը, երկիրը, գիտական կազմակերպությունը
5. Թեմայի իրականացման վայր հանդիսացող Կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը, հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն
6. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը
7. Խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը
8. Պահանջվող ֆինանսավորման ընդհանուր չափը _____, այդ թվում՝
   8.1 աշխատանքի վարձատրություն (ներառյալ եկամտային հարկը),
   8.2 այլ ծախսեր,
   8.3 վերադիր ծախսեր:

Խմբի ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*
Կազմակերպության ղեկավար կամ գիտական քարտուղար՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

«____» _____ 2020 թ.

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. ***Անոտացիան***

2. ***Խնդրի արդի վիճակի վերլուծությունը***

3. ***Թեմայի գիտական նպատակները և խնդիրները***

4. ***Հետազոտական ծրագիրը (մինչև 5 էջ)***

5. ***Իրականացման գիտական մեթոդները***

6. ***Օրացուցային պլանը (ըստ եռամսյակների)***

7. ***Միջազգային համագործակցության նախադրյալները, ինչպես նաև նպատակահարմարությունը և ակնկալվող արդյունքները (այդ թվում՝ Խորհրդատուի հետ)***

8. ***Տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները (առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները)***

9. ***Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները*** (հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))

10. ***Օգտագործված գրականության ցանկը***

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԵՄԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ[1]

1. Ազգանուն, անուն, հայրանուն
2. Ծննդյան տարեթիվ (օօ. աա. տտտտ) և ծննդավայր
3. Կրթություն (բուհ, մասնագիտություն, մասնագիտացում)
4. Որակավորում (ասպիրանտ, մագիստրոս, դիպլոմավորված մասնագետ, մագիստրատուրայի ուսանող)
5. Գիտական աստիճան
6. Վերջին թեզի վերնագիր, մասնագիտական դասիչ, պաշտպանության տարեթիվ և վայր
7. Աշխատանքի վայր, պաշտոն
8. Բջջային հեռախոսահամար
9. Էլեկտրոնային հասցե
10. Նախագծի բնագավառին վերաբերող գիտական հրապարակումներ (առավելագույնը՝ 10)

[1] *Լրացվում է յուրաքանչյուրի համար առանձին:*

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____

(ձևավորվում է Համակարգի կողմից)

հազար դրամ

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկ)												
Ազգանուն, անուն, հայրանուն	2020 թ. (2 ամիս)			2021 թ. (12 ամիս)			2022 թ. (12 ամիս)			2023 թ. (10 ամիս)		
	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը
1)												
2)												
ԸՆԴՀԱՆՈՒՐ												

2. **ԱՅԼ ԾԱԽՍԵՐ,** այդ թվում				
2.1.ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)	2020 թ.	2021 թ.	2022 թ.	2023 թ.
1)				
2)				
ԸՆԴՀԱՆՈՒՐ				
2.2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)				
1)				
2)				
ԸՆԴՀԱՆՈՒՐ				
2.3.ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ				
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ				

Խմբի ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

5	**Գերազանց:** Պատասխանը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:
4	**Շատ լավ:** Հարցի պատասխանն առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:
3	**Լավ:** Պատասխանն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:
2	**Միջին:** Հարցի պատասխանը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:
1	**Վատ:** Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:
0	**Շատ վատ:** Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:

Հարցաշար փորձագետի

1.	**Արդի վիճակի վերլուծություն:** Որքանո՞վ է համապարփակ վերլուծված ոլորտի արդի վիճակը:	
2.	**Արդիականություն**: Որքանո՞վ է գիտական ծրագիրը համապատասխանում ոլորտի արդի վիճակին:	
3.	**Ծրագիր:** Որքանո՞վ են հստակ ձևակերպված գիտական ծրագիրը և նրա լուծվելիք խնդիրներն ու նպատակները:	
4.	**Նորույթ**: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող գիտական թեման:	
5.	**Մեթոդներ:** Որքանո՞վ են առաջարկվող մեթոդները համապատասխանում գիտական թեմային:	
6.	**Համապատասխանություն:** Որքանո՞վ է գիտական թեման համապատասխանում տվյալ մասնագիտությանը:	
7.	**Նախագծի պլանավորում:** Որքանո՞վ են համապատասխանում գիտական թեմայի իրականացման փուլերը հետազոտության նպատակներին հասնելուն և որքանո՞վ են դրանք իրատեսական:	
8.	**Մարդկային ներուժ:** Որքանո՞վ է համապատասխանում խմբի անդամների թվաքանակն ու մասնագիտական որակավորումը թեմայի իրականացմանը:	
9.	**Համագործակցության նպատակահարմարություն:** Որքանո՞վ է խորհրդատուի ներգրավումը նպաստում գիտական թեմայի իրականացմանը:	
10.	**Միջգիտակարգային բնույթը:** Արդյո՞ք Թեմայի իրականացման ընթացքում նախատեսվում են միջգիտակարգային հետազոտություններ:	
	Փորձագետի գնահատականը (10 գնահատականների գումարը)	

Փորձագետի մեկնաբանություններ *(ծավալը չի սահմանափակվում)*

Նախագծի ներկայացման գնահատման մեկնաբանություն (հարցաշարի 1-6 կետեր)
Հետազոտության իրականացման գնահատման մեկնաբանություն (հարցաշարի 7-10 կետեր)

Հարցաշար Խորհրդի

1.	**Հետազոտության ղեկավարում:** Որքանո՞վ է համապատասխանում ղեկավարի մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
2.	**Խմբի անդամների մասնագիտական որակավորում:** Որքանո՞վ է համապատասխանում խմբի անդամների (այդ թվում մինչև 35 տարեկան երիտասարդ մասնագետների) մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
3.	**Խորհրդատուի մասնագիտական որակավորում:** Որքանո՞վ է համապատասխանում Խորհրդատուի մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
4.	**Նախահաշիվ:** Որքանո՞վ է համապատասխանում պահանջվող ֆինանսավորման ծավալը և դրա բաշխումն ըստ հոդվածների՝ հետազոտության նպատակներին հասնելուն:	
5.	**Ազդեցություն:** Ի՞նչ ազդեցություն կունենա թեմայի հաջող կատարումը ՀՀ-ում տվյալ ուղղության զարգացման վրա:	
6.	**Արդյունքների տնօրինում:** Որքանո՞վ է հստակ ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը և որքանո՞վ են ակնկալվող արդյունքները համապատասխանում ֆինանսավորման ծավալներին (արդյունքների հրապարակում (ամսագրեր, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՈՐՈՇՄԱՆ

1. Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշը (այսուհետ՝ ԳԳԱՑ՝ E) որոշվում է ըստ հետևյալ բաղադրիչների՝

1) Գիտական ամսագրերի հրապարակումների: Հրապարակում գիտական ամսագրում՝ հոդված (Article) կամ ակնարկ (Review)՝ Web of Knowledge, Scopus, ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ՝ ԲՈԿ) ցանկերում ընդգրկված ամսագրում, ինչպես նաև այդ ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրում:

Յուրաքանչյուր հոդվածի համար՝

$$E_1 = \sum \frac{IF}{N^{1/3}}$$

որտեղ՝

IF՝ ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցը (այսուհետ՝ ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

N՝ ընդհանուր համահեղինակների թվաքանակ,

0.2*-ից ցածր* ***IF****-ի դեպքում նրան վերագրվում է՝*

0.20*՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded(SCIE)», «Emerging Sources Citation Index(ESCI)» կամ «Scopus») ընդգրկված ամսագրում գիտական հրապարակման դեպքում,*

0.15*՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE», «AHCI», «SSCI»,«ESCI» կամ «Scopus») չընդգրկված, բայց ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված գիտական հրապարակման դեպքում,*

0.05*՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE»,«SSCI», «ESCI», «AHCI» կամ «Scopus») չընդգրկված, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակման դեպքում:*

«Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների համար՝

1.00*-ից ցածր* ***IF****-ի դեպքում նրան վերագրվում է՝*

1.00*՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts & Humanities Citation Index (AHCI)»-ի դեպքում կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)») ընդգրկված ամսագրերում գիտական հրապարակման դեպքում,*

0.50*՝ ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «AHCI», «ESCI»,«Scimago Journal & Country Ranking (SJR)» հղման համակարգերում չընդգրկված, բայց «Scopus» հղման համակարգում ընդգրկված ամսագրի դեպքում,*

0.15*՝ ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «AHCI», «ESCI» կամ «Scopus» հղման համակարգերում չընդգրկված, բայց ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված ամսագրի դեպքում,*

0.05*՝ ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «AHCI», «ESCI» կամ «Scopus» հղման համակարգերում, ինչպես նաև ԲՈԿ-ի ցանկում չընդգրկված, բայց գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակման դեպքում:*

2) Մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, գիտական հրապարակումների, նյութերի ժողովածուների հրապարակումների[2]: Մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, որևէ մեկ գիտական թեմայի նվիրված, գիտական հանրության համար նախատեսված, առնվազն 5 տպագրական մամուլ[3] ծավալ ունեցող և «ISBN» ունեցող հրապարակում: Նյութերի ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, մեկ կամ հարակից մի քանի գիտական թեմաների նվիրված և «ISBN» ունեցող հրապարակում: Նյութերի ժողովածուները ներառում են նաև մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված և/կամ գիտական նկարագրություն պարունակող հրապարակումները: Բեալի ցանկերում (Beall's list) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում հրատարակված աշխատությունները հաշվի չեն առնվելու:

<u>Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության, գիտական հրապարակումների կամ հոդվածի համար՝</u>

$$E_2 = \begin{cases} \sum B \frac{P_{SH}}{N^{1/3}} \\ \sum \frac{CA}{N^{1/3}} \end{cases}$$

որտեղ՝

B=0,30՝ *Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում*

B=0,10՝ *ՀՀ-ում կամ արտերկրում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում (օտար լեզվով կամ հայերեն),*

B=0,05՝ *ՀՀ-ում կամ արտերկրում հրատարակված նյութերի ժողովածու (օտար լեզվով կամ հայերեն),*

CA=0,20՝ *(Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրապարակված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում,*

CA=0,15՝ *հոդված արտերկրում օտար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ,*

CA=0,075՝ *հոդված ՀՀ-ում հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ (օտար լեզվով կամ հայերեն),*

P_{sh}՝ *ծավալ (տպագրական մամուլ)[3]:*

3) Գիտաժողովների մասնակցության: Գնահատվում են միայն գիտաժողովի նյութերում (Proceeding) 1 էջից ավելի ծավալ ունեցող հրապարակումները՝

$$E_3 = \sum \frac{P}{N^{1/3}}$$

որտեղ՝

P=0,10՝ *արտերկրում տեղի ունեցած միջազգային գիտաժողովի նյութ,*

P=0,05՝ *ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի նյութ:*

---

[2] *Երկրորդ ենթակետով ներկայացված հրապարակումների դասակարգման (մենագրություն, նյութերի, հոդվածների ժողովածու) վերաբերյալ վերջնական որոշումն ընդունվում է Կոմիտեի կողմից: Չեն գնահատվում բառարանները, կատալոգները, դասագրքերը, ինչպես նաև ժողովածուների, գիտաժողովների նյութերի կամ այլ աշխատությունների խմբագրումը և/կամ կազմումը:*

[3] *Մեկ տպագրական մամուլը համարժեք է A4 ֆորմատի 16 էջ տեքստի:*